	նշանակությունից ու արժանիքներից, ինչպես նաեւ այն արտահայտելու եղանակից: Իսկ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենս•դքի 10-րդ բաժնի «Քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցներ» 69 •լխի 1171 հոդվածի՝ 1-ին մասի՝ ապրանքային և սպասարկման նշանը (այսուհետ՝ ապրանքային նշան) այն նիշն է, որն օ•տա•ործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառայությունները այլ անձի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար: Տվյալ պարա•այում դատարանը, վերո•դյալ հոդվածների հիման վրա •տնում է, որ ապրանքային նշանը՝ որպես մտավոր սեփականության առանձին օբյեկտ, իրենից ներկայացնելով ապրանքի անհատակա-նացման միջոց, •լխավորապես իրականացնում է տարբերակիչ •ործառույթ, ինչով հնարավորություն է տրվում որոշելու շուկայում առաջարկվող ապրանքների պատկանելությունը և տարբերակելու դրանք այլ անձանց կողմից առաջարկվող և այլոց պատկանող ապրանքներից: Եվ որպես ապրանքի անհատականացման միջոց, ապրանքային նշանը /օրենքով սահմանված կար•ով •րանցում ստանալու արդյունքում այդպիսին ճանաչվելու պայմաններում/ չի հանդիսանում մտավոր •ործունեության արդյունք՝ •իտության, •րականության և արվեստի ստեղծա•ործություն, որի պաշտպանությունը երաշխավորված է հեղինակային իրավունքով: Ավելին, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենս•դքի 1104 հոդվածի 1-ին մասի՝ մտավոր •ործունեության արդյունքների կամ քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների (այսուհետ՝ անհատականացման միջոցներ) նկատմամբ •ույքային իրավունքների տիրապետողը մտավոր սեփականության այդ օբյեկտն իր հայեցողությամբ ցանկացած ձևով և եղանակով օրինաչափ օ•տա•ործելու բացառիկ իրավունք ունի: Այսինքն, օրենսդիրը, սահմանելով մտավոր սեփականության օբյեկտներ հանդիսացող ինչպես մտավոր •ործունեության արդյունքների, այնպես էլ քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների նկատմամբ •ույքային իրավունքների տիրապետողների /իսկ սույն քաղաքացիական •ործով հայցվորը և երրորդ անձը, ըստ •ործում առկա ապացույցների, մտավոր սեփականության առանձին օբյեկտներն օ•տա•ործելու փաստով հանդիսանում են •ույքային իրավունքի կրողներ/ համար այդ օբյեկտներն իրենց հայեցողությամբ օրինաչափ օ•տա•երծելու բացառիկ իրավունք՝ ՀՀ քաղաքացիական օրենս•դքով և օրենքներով երաշխավորելով դրանց պաշտպանությունը, իրավական պաշտպանության առումով ստեղծել է վերջիններիս համար հավասար պայմաններ՝ ապահովելով օբյեկտիվ իարականության մեջ մտավոր սեփականության օբյեկտների առանձին •ոյությունը: Անդրադառնալով որպես առարկությունները հիմնավորող ապացույցներ պատասխանողի կողմից դատարան ներկայացված ««Դեկորատիվ-կիրառական ստեղծա•ործության» անձնա•իր» անվանումով փաստաթղթերին, որոնք իրենցից ներկայացնում են հեղինակի անվան-ազ•անվան, ստեղծա•ործության անվանման վերաբերյալ տվյալներ պարունակող •ռառումներ և լուսանկարներ, դատարանն արձանա•րում է, որ հնարավոր չէ պարզել, թե ում կողմից են դրանք տրված՝ այդպիսի •ռառում առկա չլինելու, ինչպես նաև դրանք անստորա•իր լինելու պատճառով, ինչի պարա•այում դատարանը •տնում է, որ վերոնշյալ ապացույցներով չի կարող հիմնավորվել որևէ հան•ամանք: Ինչ վերաբերում է պատասխանողի կողմից դատարան ներկայացված ՀՀ հեղինակային իրավունքների ազ•ային •ործակալության կողմից տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի •րանցման մասին վկայականի պատճենին, համաձայն որի՝ «սույնով հաստատվում է, որ ՀՀ հեղինակային իրավունքների ազ•ային •ործակալությունում •րանցված է հեղինակային իրավունքի օբյեկտը.

«Դեկորատիվ կիրառական արվեստի երկ» «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ /թվով 52/»՝ 1. էսկիմո շոկոլադեպատ - «Դասական», «Օսկար», «Ռիթմ», «Ոսկեզօծ», «Դոլար», «Այսբեր•», «Սյուրպրիզ», «Զոդիակ», «Արցախ», «Դիետ», 2. էսկիմո առանց •լազուրի - «Հյուսիս», «Մաու•լի», «Մր•ային», 3. էսկիմո մր•ային •լազուրով - «Ելակ», «Արքայախնձոր», «Կիվի», «Բալ», «Նարինջ», «Ծիրան», «Բրիկետ», «Մեղեդի», 4. պաղպաղակ վաֆլե բաժակներով - «Զահ», «Թզուկ», «Հսկա», «Դոմինո», «Կորնետ», «Սոնետ», «Էլե•անտ», «1 կ•. տոպրակ», «3կ•. տոպրակ», 5. պլաստմասե բաժակներ - «Պին•վին», «Դիետ», «Դո-ռե-մի», «Երազ», «Ժպիտ», «Շանթ», «380•ր», «Գնդակ», «Նռնակ», «Կիտրոն», «Ելակ», «Զան•ակ», 6. թղթե բաժակներ - «Ֆանտազիա», «Ընտանեկան», 7. տորթեր - «Նավակ», «Հոբելյանական», «Տոնական», «Ֆանտազիա», «Հրաշք», «Ակնթարթ», «Ծննդյան», «Հարսանեկան» որի հեղինակն է հանդիսանում քաղ. Վարշամ Ղարիբյանը: Վ. Ղարիբյանի դիմումի համաձայն տվյալ օբյեկտի հետ կապված հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են բացառապես վերոհիշյալ անձին: Հեղինակ Վ. Ղարիբյանը վկայում է, որ վերոհիշյալ օբյեկտը ստեղծելիս այլ անձանց հեղինակային իրավունքները չեն խախտվել», ՀՀ հեղինակային իրավունքների ազ•ային •ործակալության կողմից տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի •րանցման մասին վկայականի պատճենին, համաձայն որի՝ «սույնով հաստատվում է, որ ՀՀ հեղինակային իրավունքների ազ•ային •ործակալությունում •րանցված է հեղինակային իրավունքի օբյեկտը. «Դիզայնի երկ» 1. բաժակ «Կոնաձև», 2. բաժակ «Զահ փոքր», 3. բաժակ «Զահ մեծ», 4. վաֆլե տարրա «Նավակ», 5. •նդակ պլաստմասսե որոնց հեղինակն է հանդիսանում քաղ. Վարշամ Ղարիբյանը: Հեղինակ Վ. Ղարիբյանի դիմումի համաձայն տվյալ օբյեկտի հետ կապված հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են բացառապես վերոհիշյալ անձին: Հեղինակ Վ. Ղարիբյանը վկայում է, որ վերոհիշյալ երկերը ստեղծելիս այլ անձանց հեղինակային իրավունքները չեն խախտվել», ՀՀ հեղինակային իրավունքների ազ•ային •ործակալության կողմից 17.05.2000թ. տրված թիվ 4/64 տեղեկանքի պատճենին, համաձայն որի՝ «տրվում է Վարշամ Ղարիբյանին առ այն, որ «Տոնական» պաղպաղակ-տորթի նրա դիզայնը •րանցված է ՀայաստանիՀանրապետության Հեղինակային իրավունքների ազ•ային •ործակալությունում 2000թ. մայիսի 3-ին: Գրանցման համարն է 7/399», ՀՀ հեղինակային իրավունքների ազ•ային •ործակալության կողմից 04.08.2000թ. տրված թիվ 4/112 տեղեկանքի պատճենին, համաձայն որի՝ «տրվում է Վարշամ Ղարիբյանին առ այն, որ «ՍՅՈՒՐՊՐԻԶ» պաղպաղակի նրա դիզայնը •րանցված է ՀՀ Հեղինակային իրավունքների ազ•ային •ործակալությունում 04.08.2000թ. 7/013 թվի ներքո», ապա դատարանն արձանա•րում է, որ վերոնշյալ փաստաթղթերը նախ չեն պարունակում •րանցված օբյեկտների նկարա•ություն, ուստի և չեն ապացուցում, դրանցում ՀՀ մտավոր սեփականության •ործակալության կողմից տրված Ապրանքային /սպասարկման/ նշանի •րանցման թիվ 4756 վկայականում նշված և «Շանթ պլյուս» ՍՊԸ-ին պատկանող «Շանթ» ապրանքային նշանի առկայությունը: Վերո•ոյալի հիման վրա դատարանը մեկ ան•ամ ևս արձանա•րում է, որ «Շանթ պլյուս» ՍՊԸ-ի բացառիկ իրավունքները ՀՀ մտավոր սեփականության •ործակալության կողմից տրված Ապրանքային /սպասարկման/ նշանի •րանցման թիվ 4756 վկայականում նշված «Շանթ» ապրանքային նշանի նկատմամբ ապացուցված լինելու պայմաններում պատասխանողի առարկություններն ամբողջությամբ անհիմն են և առարկայազուրկ:
Ուստի վերո•ոյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր-ի 130-132 հոդվածներով դատարանը,
ՎՃՌԵՑ

	«Շանթ պլյուս» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ի, ներ•րավմամբ երրորդ անձ Վարշամ Ղարիբյանի՝ «պատասխանողի կողմից «Շանթ» ապրանքային նշանի օ•տա•ործումն ար•ելելու, «Շանթ» ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն և այդ նշանի պատկերը կրող արտադրանքը շրջանառությունից դուրս բերելուն պարտավորեցնելու պահանջների մասին» բավարարել: - Ար•ելել «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ մտավոր սեփականության •ործակալության կողմից տրված Ապրանքային /սպասարկման/ նշանի •րանցման թիվ 4756 վկայականում նշված «Շանթ» ապրանքային նշանի օ•տա•ործումը: - Պարտավորեցնել «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ին ոչնչացնել ՀՀ մտավոր սեփականության •ործակալության կողմից տրված Ապրանքային /սպասարկման/ նշանի •րանցման թիվ 4756 վկայականում նշված «Շանթ» ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը: - Պարտավորեցնել «Էլիտ Շանթ» ՍՊԸ-ի շրջանառությունից դուրս բերել ՀՀ մտավոր սեփականության •ործակալության կողմից տրված Ապրանքային /սպասարկման/ նշանի •րանցման թիվ 4756 վկայականում նշված «Շանթ» ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը: Վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին: Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան[a] հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում: ԴԱՏԱՎՈՐ Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____2010թ.: ԴԱՏԱՎՈՐ Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	16-12-2010
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):	0
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	01-02-2011
էջերի քանակը:	273
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	01-02-2011
էջերի քանակը:	2 հատոր՝ 151+122
Գործին կից նյութերը:	
Որ դատարան է ուղարկվել:	Քաղաքացիական վերաք.
Ուր է ուղարկվել:	
Ելքի գրության համար:	ԴԴ18-Ե-648

Ամսաթիվ:	03-02-2011

Դատական Գործ N: ԵՔԴ/0964/02/08

Ամսաթիվ:	17-01-2011
Բողոք բերող անձը	
Անուն:	էլիտ Շանթ ՍՊԸ
Հասցե:	ք.Երեւան
Ներկայացուցիչ	
Անուն	Հակոբ
Ազգանուն	Սաֆարյան
Հասցե	ք.Երեւան
Ում կողմից է բերվել բողոքը:	Պատասխանողի ներկայացուցիչ
Պետական տուրք:	10000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխան բերող անձը	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	
Գործի համարը:	

Ամսաթիվ:	02-02-2011
Վիճակագրական տողի համարը:	5.5
Գործի համարը:	
Գործը բաղկացած է (հատոր / էջերի քանակ):	1-151, 2-122
Գործը ստացվել է:	Աջափնյակ և Դավթաշեն

Ամսաթիվ:	03-02-2011
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Կարինե Հակոբյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Տարոն Մանվելի Նազարյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Տիգրան Սահակյան

Այլ նշումներ:	

Երբ:	09-02-2011
Որոշումը ուղարկվել է կողմերին:	09-02-2011
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	09-02-2011
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	03-03-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	
Ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համարը:	104

Ամսաթիվ:	18-03-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	
Ժամ:	16:05
Նիստերի դահլիճի համարը:	104

Ամսաթիվ:	18-03-2011
Անփոփոխ թողնված դատական ակտ:	Պատճառաբանվել է
Այլ նշումներ:	

Դատական ակտ:	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն Քաղաքացիական գործ թիվ ԵՔԴ/0964/02/08 վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճիռ Նախագահող դատավոր՝ Ա. Մխիթարյան Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան), նախագահությամբ՝ Կ. ՀԱԿՈԲՅԱՆԻ մասնակցությամբ՝ դատավորներ Տ. ՍԱՀԱԿՅԱՆԻ Տ. ՆԱԶԱՐՅԱՆԻ 2011 թվականի մարտի 18-ին դռնբաց դատական նիստում, քննելով <<էլիտ Շանթ>> ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքը Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 16.12.2010 թվականին կայացրած վճռի դեմ՝ քաղաքացիական գործով ըստ հայցի <<Շանթ պլյուս>> ՍՊԸ-ի ընդդեմ <<էլիտ Շանթ>> ՍՊԸ-ի, երրորդ անձ՝ Վարշամ Ղարիբյանի՝ պատասխանողի կողմից <<Շանթ>> ապրանքային նշանի օգտագործումն արգելելու,

<<Շանթ>> ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն և այդ նշանի պատկերը կրող արտադրանքը շրջանառությունից դուրս բերելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը
<<Շանթ պլյուս>> ՍՊԸ-ն հայց է ներկայացրել դատարան ընդդեմ <<Էլիտ Շանթ>> ՍՊԸ-ի, երրորդ անձ՝ Վարշամ Ղարիբյանի՝ խնդրելով արգելել <<Էլիտ Շանթ>> ՍՊԸ-ի կողմից <<Շանթ>> ապրանքային նշանի օգտագործումը, պարտավորեցնել <<Էլիտ Շանթ>> ՍՊԸ-ին ոչնչացնել <<Շանթ>> ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը, պարտավորեցնել <<Էլիտ Շանթ>> ՍՊԸ-ին շրջանառությունից դուրս բերել <<Շանթ>> ապրանքային նշանի պատկերը կրող արտադրանքը:
Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը /այսուհետ՝ Դատարան/ 16.12.2010 թվականին վճռել է հայցը բավարարել:
Դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացվել <<Էլիտ Շանթ>> ՍՊԸ-ի կողմից:
Վերաքննիչ դատարանի 09.02.2011 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:
<<Շանթ պլյուս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոքի պատասխան:

2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը
Վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.
Դատարանի 16.12.2010 թվականին թիվ ԵՔԴ/0964/02/08 քաղաքացիական գործով կայացված վճիռն օրինական և հիմնավոր չէ, այն կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով:
Նյութական իրավանորմերի խախտման մասով.
Դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1171-րդ, 1172-րդ, 1174-րդ և 1178-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր և չի կիրառել <<Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ, 11-րդ, և 13-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1101-րդ, 1102-րդ, 1103-րդ և 1104-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:
<<Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի տրամաբանությունից բխում է, որ ստեղծագործության նկատմամբ բացառիկ գույքային իրավունքներն ապահովում են հեղինակի նյութական շահերը՝ տալով հեղինակին բացառիկ իրավունք՝ թույլատրել կամ արգելել իր ստեղծագործության կամ դրա օրինակների օգտագործումը:
Հեղինակը բացառիկ իրավունք ունի օգտագործելու իր ստեղծագործությունը ցանկացած ձևով և եղանակով, ինչպես նաև երրորդ անձանց թույլատրել դրանց օգտագործումը, մասնավորապես.
Սույն պարագայում Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալության կողմից 1997-2000թթ. ընկած ժամանակահատվածում հաստատվել է Վարշամ Ղարիբյանի <<Դեկորատիվ կիրառական արվեստի երկ>>, <<Պաղպաղակների տեսակներ և անվանումներ>>, <<Դիզայնի երկեր>> մի շարք ստեղծագործությունների հետ կապված հեղինակային բոլոր իրավունքները և, որ վերը նշված բոլոր ստեղծագործություններն (օբյեկտները) ունեն մեկ ընդհանուր տարր՝ անկախ դիզայնի առանձնահատկություններից դրանց բոլորի վրա զետեղվել է <<Շանթ>> ապրանքանշանի պատկերը, որը հանդիսացել է Վարշամ Ղարիբյանին բացառիկ հեղինակային իրավունքով պատկանող բոլոր ստեղծագործությունների

անբաժանելի մասը (տարրը), ընդ որում՝ վերը նշված ստեղծագործություններում զետեղված է ինչպես կապույտ գույնով եզրագծված, անկյունները կորացված ուղղանկյան մեջ կապույտ գույնով դեպի վեր թեքությամբ շեղագիր գրված <<Շանթ>>, որի ներքևում առկա է նույն ուղղությամբ լայնացող կարմիր գույնով նշանով պատկերը, այնպես էլ կապույտ գույնն օվալի մեջ կապույտ գույնով դեպի վեր թեքությամբ շեղագիր գրված <<Շանթ>>, որի ներքևում առկա է նույն ուղղությամբ լայնացող կարմիր գույնով նշանով պատկերը:
ՀՀ-ի հեղինակային իրավունքների գրանցման ոլորտում որպես պետական լիազորված մարմին ՀՀ Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալության կողմից 22.07.1997 թվականին տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00172 վկայականի համաձայն՝ հաստատվել է ՀՀ Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալությունում գրանցված բացառապես Վարշամ Ղարիբյանի <<Դեկորատիվ կիրառական արվեստի երկ>>, <<Պաղպաղակների տեսակներ և անվավնումներ>> (թվով 52) ստեղծագործությունների (օբյեկտների) հետ կապված հեղինակային բոլոր իրավունքները:
ՀՀ Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալության կողմից 06.04.1998 թվականին տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00218 վկայականի համաձայն՝ հաստատվել է ՀՀ Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալությունում գրանցված բացառապես Վարշամ Ղարիբյանի <<Դիզայն երկեր>> ստեղծագործությունների (օբյեկտների) հետ կապված հեղինակային բոլոր իրավունքները:
Հարկ է նշել, որ հեղինակային իրավունքի վերը նշված բոլոր ստեղծագործություններն (օբյեկտները) ունեն մեկ ընդհանուր տարր՝ անկախ դիզայնի առանձնահատկություններից դրանց բոլորի վրա զետեղվել է Վարշամ Ղարիբյանի կողմից ստեղծված <<Շանթ>> բառով պատկերը, որը հանդիսացել է Վարշամ Ղարիբյանին բացառիկ հեղինակային իրավունքով պատկանող բոլոր ստեղծագործությունների անբաժանելի մասը (տարրը) և որը հետագայում <<Շանթ Պլյուս>> ՍՊԸ կողմից գրանցվել է որպես ապրանքանշան:
Նման պայմաններում, Դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ դեռևս 1997 թվականից Վարշամ Ղարիբյանը ստեղծել է պաղպաղակի տեսակների, էսքիզների, փաթեթավորումների ծավալային պատկերների նմուշներ, որոնց վրա զետեղել է իր կողմից ստեղծված <<Շանթ>> պատկերը և հետագայում հիմնադրելով պաղպաղակի արտադրությամբ զբաղվող <<էլիտ Շանթ>> ՍՊ Ընկերությունը, վերջինիս թույլատրել է արտադրված պաղպաղակները փաթեթավորելու համար օգտագործել իր կողմից ստեղծված <<Շանթ>> պատկերը կրող պաղպաղակի փաթեթավորման թղթերը:
Վարշամ Ղարիբյանը, անկախ պատրաստի արտադրանքի փաթեթավորման եղանակից, սպառողին ցանկացել է ներկայացնել ապրանքի և փաթեթավորման հանդեպ իր հեղինակության յուրովի դրսևորումը՝ սպառողի մտքում և տեսողական դաշտում աներկբայելի կերպով դաջելով <<ՇԱՆԹ>> պատկերը, իբրև իր հեղինակային բացառիկ իրավունքի նշում և արտացոլում:
Վերլուծելով ստեղծագործության հեղինակի բացառիկ իրավունքի ծագման բնույթն ու դրա առանձնահատկությունները՝ պետք է արձանագրել, որ հնարավոր չէ, որ տարբեր անձանց մտքում կամ երևակայության մեջ առաջանան նույն ստեղծագործության էսկիզը, նույն պատկերը, գունային նույն գամման, նույն տառատեսակը, նույն չափերը, և այլն, որոնք անհատականացնում են տվյալ ստեղծագործությունը, այն տարանջատելով և տարբերելով այլ՝ միգուցե համանման ստեղծագործություններից, այսինքն, Վարշամ Ղարիբյանի մտքում ծագած, այնուհետև համապատասխան կրիչի վրա արտացոլված ստեղծագործությունը, սույն պարագայում՝ <<Դեկորատիվ կիրառական արվեստի երկի>>, <<Պաղպաղակների

տեսակներ և անվանումներ>> (թվով 52), <<Դիզայնի երկեր>> ստեղծագործությունների (օբյեկտների) մասը կազմող <<Շանթ>> ապրանքանշանի պատկերը, չէր կարող առաջանալ որևէ այլ անձի մտքում կամ երևակայության մեջ:
Նման պայմաններում ստացվում է այնպես, որ <<Շանթ Պլյուս>> ՍՊԸ-ն հենց ինքն է խախտել Վարշամ Ղարիբյանի հեղինակային իրավունքները:
Դատարանը հաշվի չի առել, որ <<Շանթ>> պատկերը հանդիսացել է Վարշամ Ղարիբյանի հեղինակային իրավունքով պաշտպանված ծավալային պատկերների մի մասը և <<էլիտ Շանթ>> ՍՊ Ընկերության կողմից օգտագործվել իր միակ հիմնադիր և մասնակից Վարշամ Ղարիբյանի հեղինակային իրավունքով ապահոված պաղպաղակի տեսակների էսքիզները, փաթեթավորման ծավալային պատկերները կրող փաթեթավորման թղթերը և կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1171-րդ, 1172-րդ, 1174-րդ և 1178-րդ հոդվածները <<Շանթ Պլյուս>> ՍՊԸ հայցը բավարարելու վերաբերյալ ակնհայտ անհիմն վճիռ է կայացրել:
Բացի դրանից, Դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1171-րդ, 1172-րդ, 1174-րդ և 1178-րդ հոդվածները կիրառելիս հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ Մտավոր սեփականության գործակալությունում <<Շանթ Պլյուս>> ՍՊԸ-ի կողմից գրանցված <<Շանթ>> ապրանքային նշանը վկայագրում պատկերված է որպես կապույտ գույնով եզրագծված, անկյունները կորացված ուղղանկյան մեջ կապույտ գույնով դեպի վեր թեքությամբ շեղագիր գրված <<Շանթ>>, որի ներքևում առկա է նույն ուղղությամբ լայնացող կարմիր գույնով նշան, մինչդեռ դատարանում որպես ապացույց հետազոտված ՇՆ սկավառակի վրա ձայնագրված Երևան հեռուստաընկերությամբ հեռարձակվող <<էլիտ Շանթ>> ՍՊԸ գովազդում առկա պատկերը ունեցել է հետևյալ տեսքը՝ կապույտ գույնը օվալի մեջ կապույտ գույնով դեպի վեր թեքությամբ շեղագիր գրված <<Շանթ>>, որի ներքևում առկա է նույն ուղղությամբ լայնացող կարմիր գույնով նշան:
Փաստորեն, Դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ <<էլիտ Շանթ>> ՍՊԸ-ի կողմից գովազդվում և փաթեթավորման թղթերի վրա օգտագործվում է կապույտ գույնի օվալի մեջ կապույտ գույնով դեպի վեր թեքությամբ շեղագիր գրված <<Շանթ>> տեսքով պատկերը, որպիսին <<Շանթ Պլյուս>> ՍՊԸ կողմից որպես ապրանքանշան գրանցված չէ:
Դատավարական նորմերի խախտման մասով
Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, հոդվածը, 53-րդ հոդվածի 1 –ին մասը, 119-րդ և 123-րդ հոդվածները:
Դատարանը 21.10.2010 թվականին նշանակված նախնական դատական նիստի ժամանակ քննության առարկա չի դարձրել պատասխանող կողմի ներկայացուցչի կողմից Դատարան ներկայացված նախնական դատական նիստը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը:
Դատարանը 21.10.2010 թվականին առանց պատասխանողի ներկայացուցչի կողմից դատարան ներկայացված նախնական դատական նիստը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը քննության առարկա դարձնելու, առանց նման միջնորդության մասին նույնիսկ հիշատակելու նախնական դատական նիստը պատասխանողի բացակայությամբ անցկացնելու մասին արձանագրային որոշում է կայացրել:
Այդ օրը Դատարանը պարզել է ապացուցման ենթակա փաստերը, ինչպես նաև թե արդյոք հայցվոր կողմն ունի լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու միջնորդություն կամ այլ միջնորդություն, որից հետո գործը համարել է դատաքննությանը նախապատրաստված և գործը նշանակել է դատաքննության՝ պատասխանող կողմին զրկելով հավասարության պայմաններում իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելու հնարավորությունից, մասնավորապես, զրկել է վերջինիս լրացուցիչ ապացույցներ

	ներկայացնելու և միջնորդություններ անելու հնարավորությունից, ինչի պատճառով պատասխանող կողմը որոշակի ապացույցներ չի կարողացել ներկայացնել դատարան: Բացի դրանից, Դատարանը, սույն գործով դատաքննությունը նույնպես անցկացրել է պատասխանողի բացակայությամբ՝ զրկելով պատասխանողին դատաքննության ընթացքում իր դիրքորոշումը հայտնելու, հայցապահանջի հետ կապված հայցվորին հարցեր տալու հնարավորությունից: Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ սույն գործի քննության ընթացքում պատասխանող կողմը զրկված է եղել հավասարության պայմաններում գործի քննության ողջամիտ հնարավորությունից և թե նախնական դատական նիստի ընթացքում, թե դատաքննության ընթացքում պատասխանող կողմը եղել է հակառակորդ կողմի համեմատ էականորեն նվազ բարենպաստ վիճակում: Դատարանը պատշաճ գնահատականի չի արժանացրել գործում առկա ապացույցները, բազմակողմանի լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել դրանք, հաշվի չի առել դրանց համակցությունը և փոխադարձ կապը, ինչն էլ, ըստ էության, հանգեցրել է գործի սխալ լուծմանը, մասնավորապես, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա՝ - Հայաստանի Հանրապետության հեղինակային իրավունքների գրանցման ոլորտում որպես պետական լիազորված մարմին ՀՀ Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալության կողմից 22.07.1997 թվականին տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00172 վկայականը, - ՀՀ Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալության կողմից 06.04.1998 թվականին տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00218 վկայականը, - ՀՀ Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալության կողմից 17.05.2000 թվականին տրված թիվ 4/64 տեղեկանքը (03.05.2000թ. թիվ 7/399 գրանցում) և 04.08.2000 թվականի թիվ 4/112 տեղեկանքը (04.08.2000թ. թիվ 7/013 գրանցում): Նշված ապացույցների բազմակողմանի լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրության արդյունքում դատարանին պարզ կլիներ, որ դեռևս 1997 թվականից Վարշամ Ղարիբյանը ստեղծել է պաղպաղակի տեսակների, էսքիզների, Փաթեթավորումների ծավալային պատկերների նմուշներ, որոնց վրա զետեղել է իր կողմից ստեղծված <<Շանթ>> պատկերը և հետագայում հիմնադրելով պաղպաղակի արտադրությամբ զբաղվող <<էլիտ Շանթ>> ՍՊ Ընկերությունը, վերջինիս թույլատրել է արտադրված պաղպաղակները փաթեթավորելու համար օգտագործել իր կողմից ստեղծված <<Շանթ>> պատկերը կրող պաղպաղակի փաթեթավորման թղթերը: Դատարանին պարզ կլիներ նաև, որ <<Շանթ>> պատկերը հանդիսացել է Վարշամ Ղարիբյանի հեղինակային իրավունքով պաշտպանված ծավալային պատկերների մի մասը և <<էլիտ Շանթ>> ՍՊ Ընկերության կողմից օգտագործվել է ոչ թե <<Շանթ Պլյուս>> ՍՊԸ ապրանքային նշանը, այլ իր միակ հիմնադիր և մասնակից Վարշամ Ղարիբյանի հեղինակային իրավունքով ապահոված պաղպաղակի տեսակների էսքիզները, փաթեթավորման ծավալային պատկերները կրող փաթեթավորման թղթերը: Դատարանը բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ և միմյանց հետ համադրելով չի ուսումնասիրել նաև ՀՀ Մտավոր սեփականության գործակալության կողմից <<Շանթ Պլյուս>> ՍՊ ընկերությանը տրամադրված թիվ 4756 ապրանքային (սպասարկման) նշանի գրանցման վկայագիրը, որում ապրանքային նշանը պատկերված է որպես կապույտ գույնով եզրագծված, անկյունները կորացված ուղղանկյան մեջ կապույտ գույնով դեպի վեր թեքությամբ շեղագիր գրված <<Շանթ>>, որի ներքևում առկա է նույն ուղղությամբ լայնացող կարմիր գույնով նշան, ինչպես նաև հայցվորի կողմից որպես ապացույց ներկայացված ՇՕ սկավառակի վրա ձայնագրված Երևան հեռուստաընկերությամբ հեռարձակվող <<էլիտ Շանթ>>

ՍՊԸ գովազդը, որում առկա <<Շանթ>> պատկերը ունի հետևյալ տեսքը կատույտ գույնի օվալի մեջ կապույտ գույնով դեպի վեր թեքությամբ շեղագիր՝ գրված <<Շանթ>>, որի ներքևում առկա է նույն ուղղությամբ լայնացող կարմիր գույնով նշան:
Եթե դատարանը բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ և միմյանց հետ համադրելով ուսումնասիրեր վերոգրյալ երկու ապացույցները ապա պարզ կլիներ, որ <<էլիտ Շանթ>> ՍՊ Ընկերությունը չի օգտագործում <<Շանթ Պլյուս>> ՍՊ Ընկերության ապրանքային նշանը, քանի որ կապույտ գույնի օվալի մեջ կապույտ գույնով դեպի վեր թեքությամբ շեղագիր գրված <<Շանթ>>, որի ներքևում առկա է նույն ուղղությամբ լայնացող կարմիր գույնով նշան տեսքով ապրանքային նշան <<Շանթ Պլյուս>> ՍՊԸ անվամբ ՀՀ Մտավոր սեփականության գործակալությունում չի գրանցվել:
Սույն բողոքում նշված պատճառաբանություններով Դատարանի 16.12.2010 թվականի թիվ ԵՔԴ/0964/02/08 քաղաքացիական գործով կայացված վճիռն առերևույթ հակասում է ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 11.08.2009թ.–ի թիվ ԵԿԴ/1766/02/08, 18.05.2007թ.–ի թիվ 3–346 ՏԴ, 31.10.2008թ-ի թիվ ՇԴ/0351/02/08 և 01.02.2008թ.–ի թիվ 3-89/ՏԴ նախադեպային որոշումներին, որոնք ՀՀ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթների իմաստով պարտադիր են բոլոր դատական ատյանների համար:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ, 205-211-րդ հոդվածներով՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Դատարանի 16.12.2010 թվականի թիվ ԵՔԴ/0964/02/08 քաղաքացիական գործով կայացրած վճիռը և փոփոխել՝ <<Շանթ Պլյուս>> ՍՊԸ-ի հայցը մերժել:

2.1. Վերաքննիչ բողոքի պատասխանի հիմքերը, հիմնավորումները
Բողոքաբերի փաստարկը /Վարշամ Ղարիբյանի հեղինակային իրավունքի մասին/ անհիմն է, չի բխում իրականությունից, չի հաստատվում գործում առկա ապացույցներով և բոլոր դեպքերում չի առնչվում սույն գործին:
Պնդելով, որ <<Շանթ>> ապրանքային նշանի պատկերի նկատմամբ հեղինակային իրավունքը պատկանում է Վարշամ Ղարիբյանին, բողոքաբերը, փաստորեն, բերել է այնպիսի փաստարկ, որը որևէ կապ չունի սույն գործի լուծման տեսանկյունից: Վերջինս ակնհայտորեն շփոթել է <<Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին>> ՀՀ օրենքի և <<Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին>> ՀՀ օրենքի գործողությունների ոլորտները:
Ցանկացած ապրանքային նշան ունի իր հեղինակը: Որևէ հեղինակի ստեղծագործություն՝ մեկ այլ սուբյեկտի կողմից որպես ապրանքային նշան գրանցելիս և օգտագործելիս, բնականաբար, ծագում են իրավահարաբերություններ հեղինակի և ապրանքային նշանի սեփականատիրոջ միջև: Այդ իրավահարաբերությունները գտնվում են <<<Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին>> ՀՀ օրենքի կարգավորման ոլորտում: Մասնավորապես, եթե հեղինակը գտնում է, որ իր ստեղծագործությունը մեկ այլ սուբյեկտի կողմից որպես ապրանքային նշան օգտագործվում է առանց իր համաձայնության, ապա նա իրավունք ունի վիճարկել այդպիսի օգտագործումը:
Տվյալ դեպքում Վարշամ Ղարիբյանը, համարելով իրեն <<Շանթ>> ապրանքային նշանի պատկերի հեղինակ, դատական կարգով վիճարկել է ՀՀ արտոնագրային վարչության 12.10.1999 թվականի <<Շանթ Պլյուս>> ՍՊԸ-ի անվամբ <<Շանթ>> ապրանքային նշանի պատկերի թիվ 4756 և ՀՀ մտավոր սեփականության գործակալության 10.09.2008 թվականի <<Շանթ>> ապրանքային (սպասարկման) նշանի գործողության երկարաձգման գրանցումները:
Միաժամանակ, նույն հիմնավորմամբ, Վարշամ Ղարիբյանը պահանջել էր արգելել <<Շանթ Պլյուս>> ՍՊ ընկերության կողմից այդ ապրանքային նշանի օգտագործումը: Սակայն գործերի քննության

ընթացքում, նա հրաժարվել էր իր այդ հայցերից, որի արդյունքում վարչական և քաղաքացիական գործերի վարույթները կարճվել են:
Վարշամ Ղարիբյանը, որը հանդիսանում է <<Շանթ>> ապրանքային նշանի պատկերի հեղինակ, չի վիճարկում ՀՀ արտոնագրային վարչության 12.10.1999 թվականի <<Շանթ Պլյուս>> ՍՊԸ-ի անվամբ <<Շանթ>> ապրանքային նշանի պատկերի թիվ 4756 և ՀՀ մտավոր սեփականության գործակալության 10.09.2008 թվականի <<Շանթ>> ապրանքային (սպասարկման) նշանի գործողության երկարաձգման գրանցումները, ինչպես նաև՝ չի վիճարկում <<Շանթ Պլյուս>> ՍՊ ընկերության կողմից այդ ապրանքային նշանի օգտագործման իրավաչափությունը:
Այսպիսով, հայցվոր <<Շանթ Պլյուս>> ՍՊ ընկերության (<<Շանթ>> ապրանքային նշանի սեփականատեր) և պատասխանող <<Էլիտ Շանթ>> ՍՊ ընկերության (որը՝ <<Շանթ>> ապրանքային նշանի իրավատեր չհանդիսանալով, օգտագործում է այն) միջև ծագած իրավահարաբերությունների նկատմամբ ենթակա է կիրառման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1172-րդ հոդվածը, որը Դատարանի կողմից իրավացիորեն կիրառվել է:
Ինչ վերաբերում է Վարշամ Ղարիբյանի՝ <<Շանթ>> ապրանքային նշանի պատկերի հեղինակ հանդիսանալու հանգամանքին, ապա /թեև, ինչպես ասվեց, այս հանգամանքը կապ չունի քննարկվող գործի հետ/ Պատասխանողի այս փաստարկը չի համապատասխանում իրականությանը և չի բխում վերաքննիչ բողոքում հիշատակված ապացույցներից:
Բողոքում վկայակոչված՝ ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալության կողմից 22.07.1997 թվականին տրված՝ <<Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին>> թիվ 00172 վկայականում թվարկված են թվով 52 պաղպաղակի տեսակներ, որոնց տեսակների և անվանումների նկատմամբ Վարշամ Ղարիբյանն ունի հեղինակային իրավունք: Սակայն այդ վկայականից չի երևում տվյալ պաղպաղակների և դրանց փաթեթների արտաքին տեսքը, այսինքն՝ դրանով չի հաստատվում Պատասխանողի այն պնդումը, որ նշված պաղպաղակների դիզայնի մեջ առկա է եղել <<Շանթ>> ապրանքային նշանի պատկերը:
Նույնը վերաբերում է Պատասխանողի բողոքում վկայակոչված՝ ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալության 06.04.1998 թվականի թիվ 00172 վկայականին, ինչպես նաև՝ ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալության պետի 17.05.2000 թվականի թիվ 4/64 և 04.08.2000 թվականի թիվ 4/112 գրություններին:
Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքում վկայակոչված՝ <<Դեկորատիվ-կիրառական ստեղծագործության անձնագիր>> վերնագրված փաստաթղթերին, ապա այդ փաստաթղթերի վրա առկա է <<<Հայաստանի Հանրապետության հեղինակային իրավունքի ազգային գործակալություն>> տպագիր նշումը, պաղպաղակների փաթեթների լուսանկարներ, անվանումներ և Վարշամ Արամի Ղարիբյանի տվյալները՝ որպես հեղինակի: Սակայն, այդ փաստաթղթերի վրա առկա չէ նշում՝ դրանք տված պաշտոնատար անձի մասին, բացակայում է որևէ ստորագրություն կամ կնիք: Այսպիսով, ինչպես իրավացիորեն նշել է Դատարանն իր վճռի պատճառաբանական մասում, այդ փաստաթղթերով չի կարող հիմնավորվել գործի համար նշանակություն ունեցող որևէ հանգամանք: Ավելին, այդ լուսանկարներից պարզ երևում է, որ դրանցում պատկերված փաթեթավորման թղթերի դիզայնը չի կարող նույնական լինել այն դիզայնին, որի նկատմամբ 1997-2000 թվականներին գրանցվել է Վարշամ Ղարիբյանի հեղինակային իրավունքը: Մասնավորապես, Պատասխանողի կողմից վկայակոչվող այդ լուսանկարներում երևում է, որ փաթեթավորման թղթերի վրա առկա են <<ԳԼՈԲԱԼ>> և <<ԳՈԼԴ ՓԱՐԻԶ 2002>> որակի նշանները: Առաջինը <<Շանթ Պլյուս>> ՍՊ ընկերությանը շնորհվել է 2000 թվականին, երկրորդը՝ 2002 թվականին, ինչը պարզ երևում է լուսանկարներից (առավել լավ դա երևում է <<էսկիմո>>

<<Այսբերգ>>-ի լուսանկարից): Այսպիսով, պաղպաղակների (փաթեթների) դիզայնը, որի համար 1997-2000 թվականներին Վարշամ Ղարիբյանին տրվել են <<Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին>> վկայականներ, բոլոր դեպքերում չեն համապատասխանում գործում առկա լուսանկարներում պատկերված փաթեթների դիզայնին:
Ի դեպ, Վարշամ Ղարիբյանը մեկ անգամ փորձել է, հանդես գալով իբրև վերը նշված պատկերների հեղինակ, դատական կարգով արգելել մեկ այլ սուբյեկտի՝ Արմ Սվիթ ՍՊ ընկերությանն օգտագործել այդ պատկերները կրող փաթեթավորման թղթերը (գործ թիվ ԵՄԴ 0636/02/09): ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2010 թվականի որոշմամբ (մտել է օրինական ուժի մեջ) Վարշամ Ղարիբյանի հայցն ընդդեմ <<Արմ Սվիթ>> ՍՊ ընկերության՝ <<Հեղինակային իրավունքները խախտող գործողությունները կանխելու, որպես դրա հետևանք պատասխանողի կողմից հայցվորին հեղինակային իրավունքով պատկանող ծավալային պատկերների օգտագործումն արգելելու, ծավալային պատկերները կրող փաթեթավորման թղթերը շրջանառությունից դուրս բերելուն և ոչնչացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին>>, մերժվել է:
Նշված որոշման մեջ Վերաքննիչ դատարանը, գնահատելով այն նույն ապացույցները, որոնց վրա ներկայումս հղում է կատարվում Պատասխանողի վերաքննիչ բողոքում, մասնավորապես նշել է՝ <<Ավելին, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ՀԻԱԳ-ի կողմից 22.07.1997 թվականին տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00172 վկայականի պատճենը՝ պաղպաղակների թվով 52 տեսակների և անվանումների վերաբերյալ, որևէ նշում չի պարունակում վիճարկվող պաղպաղակների փաթեթավորման թղթերի դիզայնի նկարագրի վերաբերյալ, և այն, առանց վիճարկվող ծավալային պատկերները կրող փաթեթավորման նմուշների նկարագրի, ոչ մի կապ չի կարող ունենալ վիճելի ծավալային պատկերները կրող փաթեթավորման թղթերի հետ, որոնք օգտագործվում են պատասխանող «Արմ Սվիթ» ՍՊ ընկերության կողմից»:
Բողոքի փաստարկն առ այն, որ <<Շանթ>> ապրանքային նշանը նկարագրված է <<կապույտ գույնով եզրագծված, անկյունները կորացված ուղղանկյան մեջ կապույտ գույնով դեպի վեր թեքությամբ շեղագիր գրված <<Շանթ>>, որի ներքևում առկա է նույն ուղղությամբ լայնացող կարմիր գույնով նշան>>, մինչդեռ պատասխանող <<էլիտ Շանթ>> ՍՊ ընկերությունն իր գովազդում օգտագործում է <<կապույտ օվալի մեջ կապույտ գույնով դեպի վեր թեքությամբ շեղագիր գրված <<Շանթ>>, որի ներքևում առկա է նույն ուղղությամբ լայնացող կարմիր գույնով նշան>>, անհիմն է և չի բխում օրենքից: Այսպես. առաջին ատյանի դատարանում Պատասխանողի կողմից ներկայացվել է պատասխան, որում չի արտահայտել այն դիրքորոշումը, թե Պատասխանողը չի օգտագործում <<Շանթ>> ապրանքային նշանը: Նման դիրքորոշում ամբողջ դատավարության ընթացքում Պատասխանողի կողմից չի ներկայացվել՝ ոչ գրավոր և ոչ էլ՝ բանավոր: Հետևապես, Պատասխանողի վերաքննիչ բողոքն այդ մասով ենթակա չէ քննության:
Այնուհանդերձ, եթե Վերաքննիչ դատարանը քննության առնի Պատասխանողի այս փաստարկը, ապա գործով ապացուցված է պատասխանող <<էլիտ Շանթ>> ՍՊ ընկերության կողմից <<Շանթ>> ապրանքային նշանի օգտագործման փաստը: Մասնավորապես, Հայցվորի կողմից Դատարան են ներկայացվել պատասխանող <<էլիտ Շանթ>> ՍՊ ընկերության կողմից արտադրված պաղպաղակները, որոնց փաթեթների վրա զետեղված է <<Շանթ>> ապրանքային նշանը:
Վերաքննիչ բողոքը դատավարական իրավունքների խախտման մասով ևս անհիմն է: Այսպես. գործով նշանակված են եղել բազմաթիվ նախնական դատական նիստեր, որոնց ժամանակի և վայրի մասին Պատասխանողը պատշաճ ծանուցվել է, ինչը չի

ժխտում:
21.10.2010 թվականի նախնական դատական նիստի մասին Պատասխանողը նույնպես պատշաճ ծանուցված է եղել, որպիսի հանգամանքը նրա կողմից նույնպես չի վիճարկվում, սակայն պնդում է, որ այդ դատական նիստի ընթացքում պետք է քննարկվեր, բայց չի քննարկվել նախնական դատական նիստը հետաձգելու վերաբերյալ իր միջնորդությունը: Պատասխանողի պնդմամբ՝ այդ հանգամանքը զրկել է իրեն լրացուցիչ ապացույցներ և միջնորդություններ ներկայացնելու հնարավորությունից: Նման դեպքում Պատասխանողը պետք է հիմնավորեր, որ այդ միջնորդությունն ինքը ներկայացրած է եղել Դատարան՝ նախքան Դատարանի կողմից դատաքննություն նշանակելու որոշման կայացումը, որ այդ միջնորդությունը չքննարկելը հանդիսանում է որոշակի դատավարական նորմի խախտում, և միջնորդությունը քննարկվելու դեպքում այն բավարարվելու էր և որ այդ ամենը հանգեցրել է կամ կարող է հանգեցրած լինի գործի ոչ ճիշտ լուծմանը: Այնինչ, Պատասխանողը չի հիմնավորել վերը նշված կետերից և ոչ մեկը: Պատասխանողը չի ժխտում, որ նա պատշաճ ծանուցված է եղել դատաքննության օրվա և ժամի մասին: Հետևապես, եթե նա ցանկանում էր նոր ապացույցներ ներկայացնել և գտնում էր, որ իր այդ իրավունքը՝ իրենից չկախված պատճառներով, չի կարողացել իրացնել նախքան դատաքննությունը սկսվելը, ապա կարող էր այդ ապացույցները ներկայացնել դատաքննության ընթացքում: Դատաքննության ընթացքում Պատասխանողը նույնպես չի փորձել որևէ նոր ապացույց ներկայացնել, ավելին՝ պատշաճ ծանուցված լինելով դատաքննության օրվա և ժամի մասին, չի ներկայացել դատարան: Նույնը վերաբերում է միջնորդություններ ներկայացնելու հնարավորությանը. Պատասխանողը կարող էր ցանկացած միջնորդությամբ հանդես գալ նաև դատաքննության ընթացքում, ինչը նույնպես չի արել:
Վերաքննիչ բողոքին կից Պատասխանողը ներկայացրել է մի շարք փաստաթղթեր: Դրանք չեն կարող ընդունվել որպես ապացույց և հետազոտվել Վերաքննիչ դատարանի կողմից՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն:
Վերոգրյալի հիման վրա հայցվոր ընկերությունը խնդրել է վերաքննիչ բողոքը մերժել:

3. Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը
Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստական հանգամանքը.
1. Համաձայն ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից տրված Ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման թիվ 4756 վկայագրի՝ սեփականատեր՝ <<Շանթ պլյուս>> ՍՊԸ, ապրանքներ /ծառայություններ/՝ դաս 30. պաղպաղակ, նշանը պաշտպանվում է սպիտակ, կարմիր և կապույտ գունային համակցությամբ: Հայտի թիվ 990116, նշանի առաջնությունը՝ 22.02.1999, ներկայացման թվականը՝ 22.02.1999, գրանցված է պետական գրանցամատյանում 12.10.1999, գործողության ժամկետը՝ 22.02.2009:
Ապրանքային նշանը վկայագրում պատկերված է որպես՝ կապույտ գույնով եզրագծված անկյունները կորացված ուղղանկյան մեջ կապույտ գույնով դեպի վեր թեքությամբ շեղագիր գրված <<Շանթ>>, որի ներքևում առկա է նույն ուղղությամբ լայնացող կարմիր գույնով նշան, այսուհետ Ապրանքային նշան: Ապրանքային նշանի գրանցման գործողությունը երկարաձգված է մինչև 22.02.2019թ.: Կատարված է 10.09.2008թ.: Նշանի օգտագործման իրավունքը լիցենզիային պայմանագրով տրված է <<Արմսվիթ>> ՍՊԸ-ին, մինչև 2017 թվականի հունվարի 20-ը ժամկետով: 20 հունվարի 2010թ:

4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վերաքննիչ բողոքը դրանում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Վերաքննիչ դատարանը եկավ հետևյալ եզրակացության.
1. Վերաքննքիչ բողոքը <<<Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին>>> ՀՀ օրենքի 6-րդ, 11-րդ, 13-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1101-րդ, 1012-րդ, 1103-րդ, 1104-րդ հոդվածներով ամրագրված դրույթների խախտման (չկիրառման) և նույն օրենսգրքի 1171-րդ, 1172-րդ, 1174-րդ հոդվածներով ամրագրված դրույթների խախտման (կիրառման) մասով անհիմն է:
Տվյալ պարագայում բողոք ներկայացրած գործով պատասխանող <<էլիտ Շանթ>> ՍՊԸ-ի կողմից վերոգրյալ նորմերի վկայակոչմամբ բողոքարկվող դատական ակտի բեկանման հարցի բարձրացումն առարկայազուրկ է հետևյալ պատճառաբանությամբ:
Նախ՝ <<<Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ, 11-րդ, 13-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1101-րդ, 1012-րդ, 1103-րդ, 1104-րդ հոդվածներով ամրագրված դրույթներով կարգավորվում են հեղինակի՝ ստեղծագործության նկատմամբ բացառիկ իրավունքներ ունենալու և այդ իրավունքներն իրացնելու հետ կապված հարաբերությունները:
Մինչդեռ սույն գործով հայցվորը Դատարանից հայցել է կանխել իր անվամբ 12.10.1999թ. գրանցված և դրա հիման վրա իրավական պահպանության տրամադրված ապրանքային նշանի ապօրինի օգտագործումը: Ըստ էության, բողոքաբերը վկայակոչում է իրավական դրույթներ, որոնցով կարգավորվող հասարակական հարաբերությունները կողմերի միջև առկա սույն վիճելի հարաբերություններից այլ են:
Վերաքննիչ դատարանը գտնում է, որ 12.10.1999թ. վարչական ակտը (ինչը հավաստվում է գործի նյութերում առկա թիվ 4756 վկայագրով), որով ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը հայցվորի անվամբ գրանցել է <<Շանթ>> ապրանքային նշանը, ենթակա է պարտադիր կատարման:
Նշված հարցի կապակցությամբ նույնաբովանդակ դիրքորոշում ունի նաև ՀՀ վճռաբեկ դատարանը, մասնավորապես՝ 21.12.2006թ. թիվ 3-2440 (ՎԴ) որոշմամբ անդրադառնալով այդ հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է. <<Սույն քաղաքացիական գործով նշված վարչական ակտը չի վիճարկվում, չի հաստատվել դրա առոչինչ լինելը, չի ճանաչվել ոչ իրավաչափ՝ անվավեր, չի կորցրել իր ուժը, հետևաբար, յուրաքանչյուր ոք, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն, պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ Երևանի քաղաքապետի որոշումն ընդունվել է Սահմանադրությամբ կամ օրենքներով իր լիազորությունների շրջանակում: Դրա հետևանքով պետք է եզրակացնել, որ Երևանի քաղաքապետի որոշումը իրավաչափ է, և որևէ անձ, մասնավորապես՝ պետական մարմինը, չի կարող կասկածի տակ դնել այդ ակտի իրավաչափությունը>>: ՀՀ վճռաբեկ դատարանը նույնաբովանդակ դիրքորոշում է հայտնել նաև 26.01.2007թ. թիվ 3-101 (ՎԴ), 27.05.2009թ. թիվ ՎԴ/2068/05/08 որոշումներով:
Նման պարագայում քանի դեռ վիճարկվող ապրանքային նշանի՝ հայցվորի անվամբ գրանցման վարչական ակտը չի ճանաչվել ոչ իրավաչափ՝ անվավեր, չի կորցրել իր ուժը, չի հաստատվել դրա առոչինչ լինելը, այն ենթակա է պարտադիր կատարման: Իսկ սա նշանակում է, որ հայցվոր <<Շանթ Պլյուս>> ՍՊԸ-ն կարող է պահանջել կանխելու իր անվամբ գրանցված ապրանքային նշանի ցանկացած ապօրինի օգտագործում տնտեսվարող բոլոր սուբյեկտներից, այդ թվում՝ պատասխանող <<էլիտ Շանթ>> ՍՊԸ-ից:
Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1171-րդ, 1172-րդ, 1174-րդ հոդվածներով ամրագրված դրույթների կիրառումն իրավաչափ է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1171-րդ հոդվածի 1-2-րդ մասերով ամրագրված է, որ ապրանքային եւ սպասարկման նշանը (այսուհետ՝ ապրանքային նշան) այն նիշն է, որն օգտագործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառայությունները այլ անձի ապրանքներից եւ (կամ) ծառայություններից տարբերելու համար: Ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրվում է օրենքով սահմանված կարգով դրա պետական գրանցման հիման վրա:
Նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ ապրանքային նշանի գրանցման փաստը եւ դրա նկատմամբ իրավունքը հավաստվում է վկայագրով:
Ապրանքային նշանի հասկացության, իրավական պահպանություն տրամադրելու հետ կապված հարցերի վերաբերյալ նույնաբովանդակ իրավակարգավորում է նախատեսված նաև <<Ապրանքային նշանների մասին>> ՀՀ օրենքի 2-րդ, 7-րդ հոդվածների 1-ին մասերով սահմանված նորմերով:
2. Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ, 123-րդ հոդվածներով ամրագրված դրույթների խախտման վերաբերյալ վերաքննիչ բողոքում տեղ գտած բողոքաբերի դիրքորոշմանը, ապա Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 217-րդ հոդվածի 2-րդ մասով ամրարված նորմի համաձայն՝ վերաքննիչ դատարանում գործի քննությունն իրականացվում է վճռաբեկ դատարանում գործի քննության կանոններով, եթե սույն բաժնով այլ կանոններ նախատեսված չեն:
Նույն օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:
Նշված նորմերի տառացի մեկնաբանման, համակարգային վերլուծության և սույն գործի փաստերի հետ համադրման արդյունքում, ինչպես նաև սույն որոշման վերոգրյալ պատճառաբանությունների հիմքով գալով այն եզրակացության, որ վեճը, ըստ էության, ճիշտ է լուծվել, Վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Դատարանի 16.12.2010թ. թիվ ԵՔԴ0964/02/08 վճռով վիճելի հարաբերությունը ստացել է ճիշտ լուծում, և այն չի կարող բեկանվել ձևական նկատառումներով:
Հակառակ պարագայում կխախտվի հայցվորի՝ արդյունավետ դատական պաշտպանության միջոցով իր իրավունքների պաշտպանությունն իրացնելու՝ ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ իրավական համակարգի մասը կազմող մի շարք միջազգային իրավական ակտերով սահմանված իրավունքը:
Ավելին, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բողոքաբերը, չմասնակցելով նախնական դատական նիստին և ըստ իր տրամաբանության, ապացույցներ ներկայացնելու հնարավորություն չունենալով, զրկված չի եղել իր դիրքորոշման հիմքում ընկած ապացույցները դատաքննության փուլում ներկայացնելու հնարավորությունից:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:
Նշված նորմի խախտում Դատարանը թույլ չի տվել, քանի որ բողոքում նշված ապացույցները գնահատելիս հաշվի է առել թե հայցվոր, թե պատասխանող կողմի դիրքորոշումները: Այդ ապացույցները գնահատվել են գործի նյութերում առկա մյուս բոլոր ապացույցների հետ իրենց համակցության մեջ: Վերաքննիչ դատարանը նման եզրահանգման է գալիս բողոքարկվող դատական ակտի պատճառաբանական մասի ուսումնասիրության արդյունքում, որտեղ բողոք բերած անձի կողմից վկայակոչված ապացույցների

	գնահատման արդյունքում Դատարանը հաստատել է համապատասխան փաստեր և դրանց հիման վրա կիրառել է համապատասխան իրավական նորմերը: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ և 221-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց 1. Վերաքննիչ բողոքը մերժել: Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 16.12.2010 թվականին թիվ ԵՔԴ/0964/02/09 քաղաքացիական գործով կայացրած վճիռը թողնել օրինական ուժի մեջ: 2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված: 3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան: ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ ԴԱՏԱՎՈՐ՝ ԴԱՏԱՎՈՐ՝ Կ. ՀԱԿՈԲՅԱՆ Տ. ՍԱՀԱԿՅԱՆ Տ. ՆԱԶԱՐՅԱՆ Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտել « » ---------- 2011 թվականին Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատական ակտի ամսաթիվը:	18-03-2011
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ.:	0
Ամսաթիվ:	08-04-2011
Ամսաթիվ:	08-04-2011
էջերի քանակ:	3h.,1-ինը՝151թ-ից,2-րդը՝122թ-ից,3-րդը՝105թ-ից
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	27-04-2011
Ուր:	Վճռաբեկ
Գրության համարը:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	28-04-2011

Դատական Գործ N: ԵՔԴ/0964/02/08

Ամսաթիվ:	18-04-2011
Բողոք բերող անձը	

Անուն:	Էլիտ Շանթ ՍՊԸ
Հասցե:	Երևան,Կշտունի փող.73
Ներկայացուցիչ	
Անուն	Հակոբ
Ազգանուն	Սաֆարյան
Հասցե	Երևան, Տիգրան Մեծի 4-304
Պետական տուրք:	20000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխան բերող անձը	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	ըստ հայցի <<Շանթ պլյուս>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Էլիտ Շանթ>> ՍՊԸ-ի, երրորդ անձ՝ Վարշամ Ղարիբյանի՝ պատասխանողի կողմից <<Շանթ>> ապրանքային նշանի օգտագործումն արգելելու, <<Շանթ>> ապրանքային նշանի պատկերը կրող փաթեթավորման թղթերը ոչնչացնելուն և այդ նշանի պատկերը կրող արտադրանքը շրջանառությունից դուրս բերելուն պարտավորեցնելու պահանջների մասին
Գործի համարը:	ԵՔԴ/0964/02/08
Ում կողմից է բերվել բողոքը:	Պատասխանողի ներկայացուցիչ
Գործի ստացման ամսաթիվը:	12-05-2011
Էջերի քանակը:	151
Գործին կից փաստաթղթերը:	2-122,3-105
Վճռաբեկ վարույթի համարը:	ԵՔԴ/0964/02/08
Ամսաթիվ:	12-05-2011
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Գոռ Գագիկի Հակոբյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	

Փաստաթուղթը տպվել է www.datalex.am պորտալի կողմից 19 Մայիս 2011